

ԴԱՏԱՎՈՐ ՅՈՒՍՈՒՑԻ ԶՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Անհամաձայնություն ժամանակավոր միջոցների կիրառման անհրաժեշտության հարցի շուրջ. Ադրբեջանի հայտարարության մեջ պատշաճ անդրադարձ է կատարվում այն իրավունքներին, որոնք Դատարանը ճանաչել է արժանահավատ. Արդյունքում վերացվել է անդառնալի վնաս հասցնելու վրանգը եւ հրապարակության խնդիրը. Պետք է ենթադրել, որ իր վարքագծի առնչությամբ հանձնառություն ստանձնող պետությունը կցուցաբերի բարեխղճություն. Միայն է պահանջել, որ Ադրբեջանի հայտարարությունները բոլոր առումներով համապատասխանեն պահանջված միջոցներին. Եզրափակիչ մասում Ադրբեջանի հավաստիացումների տարրերը փոփոխված ձեով վերարտադրելու անհրաժեշտություն չկար. Ադրբեջանի համար սահմանված՝ հաշվետվություն ներկայացնելու պահանջը թերեւս ընկալվում է որպես ենթադրություն, որ այն իր հավաստիացումները չի հնչեցրել բարեխղճորեն. Պետք է խուսափել այդպիսի տրամաբանություն ձեւավորելուց. Ադրբեջանի հայտարարության արդյունքում Հայաստանի դիմումը դարձել է առարկայազուրկ:

1. Ես համաձայն չեմ Դատարանի կողմից ժամանակավոր միջոցներ կիրառելու վերաբերյալ կայացված որոշման հետ՝ չնայած 2023 թվականի հոկտեմբերի 12-ին Ադրբեջանի կողմից Դատարանում հնչեցված հստակ եւ մանրամասն հայտարարությունների: Միջանկյալ միջոցներ կիրառվում են այն ժամանակ, երբ Հայաստանի դիմումն Ադրբեջանի լիազոր ներկայացուցչի հայտարարությունից հետո դարձել է առարկայազուրկ: Այս որոշումը հակասում է Դատարանի դատական պրակտիկային, համաձայն որի՝ ժամանակավոր միջոցները կարող են չկիրառվել այնպիսի հանգամանքներում, երբ պատասխանողը ներկայացրել է համապատասխան հավաստիացումներ:

2. Համաձայն Կանոնադրության 41-րդ հոդվածի՝ «Դատարանն իրավասու է կիրառել ժամանակավոր միջոցներ, որոնք պետք է ձեռնարկվեն որեւէ կողմի համապատասխան իրավունքները պահպանելու համար, եթե այն համարում է, որ *հանգամանքներից* ելնելով՝ առկա է այդպիսի անհրաժեշտություն»: Պահպանման

ենթակա են ոչ թե անհատների կամ ժողովուրդների իրավունքները, այլ այն պետությունների, որոնք Դատարան ներկայացված վեճի կողմերն են: Հետեաբար Դատարանը մինչև ժամանակավոր միջոցներ կիրառելը պարտավոր է հստակ սահմանել դիմումատուի կամ պատասխանող պետության արժանահավատ իրավունքների բնույթը, որոնք մինչև Դատարանի կողմից վերջնական որոշում կայացվելը պետք է պահպանվեն՝ պայմանավորված անդառնալի վնաս հասցնելու վտանգի առկայությամբ: Սա այն հիմնարար նախապայմաններից մեկն է, որոնց դեպքում Դատարանն իրականացնում է պաշտպանության միջանկյալ միջոցներ կիրառելու իր լիազորությունը:

3. Սույն գործով Դատարանը սահմանափակվում է անձանց արժանահավատ ճանաչված իրավունքները (Կարգադրության 40-րդ պարբերություն) նշելով, սակայն հստակ չի սահմանում, թե որոնք են Հայաստանի կողմից պահանջված այն իրավունքները, որոնք համարվում են արժանահավատ եւ պետք է հետեաբար պաշտպանվեն մինչև Դատարանի կողմից վերջնական որոշում կայացվելը: Կարգադրության 41-րդ պարբերության մեջ պարզապես նշված է, որ «Դատարանն արժանահավատ է համարում *Հայաստանի կողմից հայտարարված առնվազն որոշ իրավունքներ, որոնք վերջինիս պնդմամբ խախտվել են*» (ընդգծումն ավելացվել է): Հարցն այն է, թե որոնք են դրանք: Ցավոք, Կարգադրության մեջ այդ հարցի պատասխանը գտնել հնարավոր չէ:

4. Այսպիսով, մենք կարող ենք միայն ենթադրել, որ արժանահավատ իրավունքները, որոնց հիմքով Դատարանը որոշել է իրականացնել իր՝ ժամանակավոր միջոցներ կիրառելու լիազորությունը, Կարգադրության 40-րդ պարբերության մեջ նշված անձանց իրավունքներն են: Եթե դա այդպես է, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատարանը որեւէ այլ կերպ չի նշում իր կողմից արժանահավատ ճանաչված իրավունքները, կարելի է արձանագրել, որ այդ արժանահավատ իրավունքներն են՝ «իրենց բնակության վայրերը հարկադրաբար չլքելու անձանց իրավունքը՝ երկյուղելով, որ նրանց կթիրախավորեն, քանի որ պատկանում են ՌԽՎԿ-ով պաշտպանված խմբին, եւ

այդ անձանց՝ ապահով վերադարձի երաշխիքներ ստանալու իրավունքը» (Կարգադրության 40-րդ պարբերություն): Կարելի է նաեւ ենթադրել, որ սրանք այն իրավունքներն են, որոնք, ըստ Դատարանի, Հայաստանը ՌԽՎԿ-ի համաձայն կփորձի պահպանել մինչեւ ըստ էության որոշում կայացվելը:

5. Այդ դեպքում հարց է ծագում, թե արդյոք այն իրավունքներին, որոնք Հայաստանը պաշտպանում է էթնիկ ծագմամբ հայ անհատների անունից, որոնք Դատարանն ակնհայտորեն ճանաչել է արժանահավատ եւ ենթադրաբար ենթակա պաշտպանության, պատշաճ ձեով անդրադարձ կատարվել է 2023 թվականի հոկտեմբերի 12-ին Ադրբեջանի կողմից հնչեցված հայտարարությամբ: Հայտարարության ամբողջ տեքստը վերարտադրված է Կարգադրության 61-րդ պարբերության մեջ: Այնուհանդերձ, ավելորդ չի լինի մեջբերել հայտարարության առնվազն առաջին հատվածը, որը լիազոր ներկայացուցիչը ընթերցել է Դատարանում.

«ա. Ադրբեջանը պարտավորվում է իր հնարավորության սահմաններում գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի որեւէ կերպ չտարբերակելով ազգային կամ էթնիկ ծագումը՝ ապահովի հետեւյալը

ա) Ղարաբաղի բնակիչների անվտանգությունը, ներառյալ՝ նրանց ապահովությունը եւ մարդասիրական կարիքները, այդ թվում՝

i) Ղարաբաղին տրամադրելով սննդամթերք, դեղորայք եւ առաջին անհրաժեշտության իրեր.

ii) ապահովելով առկա բուժօգնության հասանելիությունը. եւ

iii) ապահովելով կոմունալ ծառայությունների տրամադրումը, այդ թվում՝ գազամատակարարումը եւ էլեկտրամատակարարումը.

բ) Ղարաբաղի բնակիչների՝ ազատ տեղաշարժի եւ բնակության վայրի ազատ ընտրության իրավունքը, այդ թվում՝ այն բնակիչների ապահով եւ անհապաղ վերադարձը, որոնք ցանկանում են վերադառնալ իրենց բնակարաններ, ինչպես նաեւ այն բնակիչների ապահով եւ անարգել հեռանալը, որոնք հայտնել են Ղարաբաղից հեռանալու ցանկություն. եւ

գ) այն անձանց գույքի պաշտպանությունը, որոնք հեռացել են Ղարաբաղից»:

6. Կարգադրության 62-րդ պարբերության մեջ Դատարանը նշում է, որ՝

«Ադրբեջանի լիազոր ներկայացուցչի հայտարարությունները, որոնք նա հրապարակայնորեն հնչեցրել է Դատարանում ու ձեռակերպել է մանրամասնորեն, նպատակ են հետապնդում կարգավորելու Լեռնային Ղարաբաղի ազգությամբ կամ էթնիկ ծագմամբ հայերի հետ կապված իրավիճակը՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին այդ տարածաշրջանում Ադրբեջանի կողմից իրականացված գործողությունից հետո: Դատարանն այն կարծիքին է, որ Ադրբեջանի լիազոր ներկայացուցչի կողմից իր Կառավարության անունից հնչեցված հայտարարությունները պարտադիր են Ադրբեջանի կողմից կատարման համար եւ նրա համար առաջացնում են իրավական պարտավորություններ»:

Դատարանը նաեւ հիշեցնում է, որ «[ե]րբ պետությունը ստանձնում է այդպիսի հանձնառություն իր վարքագծի առնչությամբ, պետք է ենթադրել, որ այն բարեխղճորեն կկատարի այդ հանձնառությունը» (*Որոշ փաստաթղթեր եւ տվյալներ առգրավելու եւ արգելանքի տակ պահելու հետ կապված հարցեր (Թիմոր-Լեշտին ընդդեմ Ավստրալիայի)*, Ժամանակավոր միջոցներ, 2014 թվականի մարտի 3-ի կարգադրություն, ԱՄԴ զեկույցներ 2014, էջ 158, 44-րդ պարբերություն):

7. Չնայած այս պնդումներին՝ Դատարանը հանգում է այն եզրակացության, որ Ադրբեջանի լիազոր ներկայացուցչի կողմից հնչեցված հայտարարությամբ չի բացառվում այն իրավունքներին անդառնալի վնաս հասցնելու վտանգը, որի պաշտպանությունը պահանջում է Հայաստանը: Համաձայն Դատարանի՝

«նույնիսկ եթե հաշվի առնենք 2023 թվականի հոկտեմբերի 12-ին՝ կեսօրին, դռնբաց լսման ընթացքում Ադրբեջանի լիազոր ներկայացուցչի կողմից իր Կառավարության անունից հնչեցված հայտարարությունները, անդառնալի վնաս

կարող է հասցվել Հայաստանի կողմից վկայակոչված իրավունքներին, եւ դեռեւս առկա է հրատապության խնդիր այն առումով, որ մինչեւ Դատարանի կողմից վերջնական որոշում կայացվելը գոյություն ունի այդ իրավունքներին անդառնալի վնաս հասցնելու իրական եւ անմիջական վտանգ» (Կարգադրության 65-րդ պարբերություն):

«Հայաստանի կողմից վկայակոչված իրավունքները» արտահայտությունը, ըստ իս, պետք է ընկալել որպես հղում այն իրավունքներին, որոնք Դատարանը ճանաչել է արժանահավատ, այլ ոչ թե բոլոր իրավունքներին, որոնց պաշտպանությունը Հայաստանը պահանջում է սույն գործի շրջանակներում:

8. Այս եզրահանգման համար Դատարանի կողմից ներկայացված միակ հիմնավորումն այն է, որ «հայտարարությունները որեւէ առումով չեն համապատասխանում Հայաստանի կողմից պահանջված միջոցներին» (Կարգադրության 63-րդ պարբերություն): Այս գնահատականը սխալ է: Կարգադրության մեջ ոչինչ չի վկայում այն մասին, որ սույն վարույթի շրջանակներում Հայաստանի կողմից պահանջված բոլոր տասը միջոցների հիմքում ընկած են ՌԽՎԿ-ով նախատեսված արժանահավատ իրավունքները, եւ հետեւաբար կնախատեսվի պաշտպանության տրամադրման անհրաժեշտություն մինչեւ Դատարանի կողմից վերջնական որոշում կայացվելը: Հետեւաբար տրամաբանական եւ իրավական տեսանկյունից ողջամիտ չէ պահանջել, որ Ադրբեջանի կողմից հնչեցված հայտարարությունները «բոլոր առումներով» համապատասխանեն Հայաստանի կողմից պահանջված միջոցներին: Դատարանը սույն կարգադրության մեջ չի նշում այդ միջոցների մեծ մասը եւ հայտարարում է, որ «Դատարանը, հաշվի առնելով Հայաստանի կողմից հայցվող ժամանակավոր միջոցների պայմանները եւ գործի հանգամանքները, գտնում է, որ միջոցները, որոնք պետք է կիրառվեն, պարտադիր չէ, որ նույնական լինեն հայցվող միջոցների հետ» (Կարգադրության 68-րդ պարբերություն):

9. Դատարանի կողմից որդեգրված մյուս սխալ մոտեցումը, ըստ իս, այն բացարձակ հակադրությունն է, որն առկա է սույն գործով Ադրբեջանի

հայտարարությանը ցուցաբերվող մոտեցման եւ ժամանակավոր միջոցների վերաբերյալ դիմումների համատեքստում պետությունների կողմից ներկայացված պաշտոնական հավաստիացումների մասով Դատարանի դատական պրակտիկայի միջեւ: Ես կարծում եմ, որ ճիշտ չէ, երբ մեծամասնությունը շեղվում է այդ վաղեմի եւ հաստատված նախադեպային իրավունքից՝ չներկայացնելով հիմնավոր կամ հստակ պատճառներ: Իսկապես, հարկ է հիշեցնել, որ բացառությամբ *Որոշ փաստաթղթերի եւ տվյալների վերաբերյալ (Թիմոր-Լեշտին ընդդեմ Ավստրալիայի)* գործի շրջանակներում արձակված՝ ժամանակավոր միջոցների վերաբերյալ կարգադրության՝ Դատարանը նախկինում մշտապես հաշվի է առել Ադրբեջանի կողմից հնչեցված հայտարարությունների բնույթի պաշտոնական ցանկացած հայտարարություն եւ եզրակացրել է, որ հաշվի առնելով այդ հայտարարությունը՝ առկա չէ անդառնալի վնաս հասցնելու վտանգ: (*Տե՛ս, inter alia (ի թիվս այլնի), Ինթերհանդել (Շվեյցարիան ընդդեմ Ամերիկայի Միացյալ Նահանգների [Interhandel (Switzerland v. United States of America)] (Միջանկյալ պաշտպանություն), 1957 թվականի հոկտեմբերի 24-ի կարգադրություն, ԱՄԴ զեկույցներ 1957, էջ 112, «Մեծ Բելթ» կամրջով անցումը (Ֆինլանդիան ընդդեմ Դանիայի) [Passage through the Great Belt (Finland v. Denmark)], ժամանակավոր միջոցներ, 1991 թվականի հուլիսի 29-ի կարգադրություն, ԱՄԴ զեկույցներ 1991, էջ 18, 27-րդ պարբերություն, Հերասպնդում իրականացնելու կամ վտարելու պարտավորությանն առնչվող հարցեր (Բելգիան ընդդեմ Սենեգալի) [Questions relating to the Obligation to Prosecute or Extradite (Belgium v. Senegal)], ժամանակավոր միջոցներ, 2009 թվականի մայիսի 28-ի կարգադրություն, ԱՄԴ զեկույցներ 2009, էջ 155, 72-րդ պարբերություն)*)

10. Ավստրալիայի կողմից հնչեցված հայտարարության հետ կապված իրավիճակը բոլորովին այլ է եղել *Որոշ փաստաթղթերի եւ տվյալների վերաբերյալ (Թիմոր-Լեշտին ընդդեմ Ավստրալիայի)* գործում: Ավստրալիայի գլխավոր դատախազի կողմից ներկայացված գրավոր հավաստիացումների մեջ կատարվել է

վերապահում եւ ներառվել բացառություն՝ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով: Այս առնչությամբ Դատարանը նկատել է՝

«Հաշվի առնելով, որ ազգային անվտանգության հարց ներառող որոշ հանգամանքներում Ավստրալիայի կառավարությունը նախատեսում է առգրավված նյութն օգտագործելու հնարավորություն, Դատարանը գտնում է, որ շարունակում է առկա լինել ենթադրյալ չափազանց վնասակար տեղեկությունների բացահայտման վտանգ» (*Որոշ փաստաթղթեր եւ տվյալներ առգրավելու եւ արգելանքի տակ պահելու հետ կապված հարցեր (Թիմոր-Լեշտին ընդդեմ Ավստրալիայի), Ժամանակավոր միջոցներ, 2014 թվականի մարտի 3-ի կարգադրություն, ԱՄԴ զեկույցներ 2014, էջ 158, 46-րդ պարբերություն*):

Հետեւաբար Դատարանը համարել է, որ Ավստրալիայի կողմից հնչեցված հայտարարությունը «զգալիորեն նպաստել է անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգը նվազեցնելուն», սակայն վտանգն ամբողջությամբ չի վերացել (*Նույն տեղում, էջ 159, 47-րդ պարբերություն*): Սույն գործով Կարգադրության մեջ բացարձակապես չի պարզաբանվում, թե ինչու Ադրբեջանի կողմից հնչեցված հայտարարությունը բավարար չի եղել անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգը վերացնելու համար, կամ դրանով չի հաջողվել վերացնել այդ վտանգը: Սա շատ ցավալի է:

11. Ինչպես Դատարանը բազմիցս արձանագրել է, Դատարանի՝ միջանկյալ միջոցներ կիրառելու լիազորությունը կիրականացվի միայն այն դեպքում, երբ առկա է հրատապության խնդիր այն առումով, որ «առկա է իրական եւ անմիջական վտանգ, որ անդառնալի վնաս կհասցվի վիճարկվող իրավունքներին մինչեւ Դատարանի կողմից վերջնական որոշում կայացվելը» (տե՛ս, օրինակ, «*Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին*» կոնվենցիայի կիրառումը (*Կատարն ընդդեմ Արաբական Միացյալ Էմիրությունների*), *Ժամանակավոր միջոցներ, 2018 թվականի հուլիսի 23-ի կարգադրություն, ԱՄԴ զեկույցներ 2018 (II), էջ 428, 61-րդ պարբերություն*): Այլ կերպ ասած՝ հրատապության խնդիրն առկա է, երբ առկա է վտանգ, որ վիճարկվող

իրավունքների էությանը կամ Դատարանի կողմից արժանահավատ ճանաչված իրավունքներին կարող է անդառնալի վնաս հասցվել մինչև ըստ էության վճիռ կայացվելը, ինչի հետեանքով այդ վճիռն արժեզրկվում է: Երկու պայմանները՝ հրատապությունը եւ անդառնալի վնաս հասցնելու վտանգը, փոխկապակցված են: Սույն գործով երկու պայմաններն էլ վերացվել են Դատարանում Ադրբեջանի հայտարարությամբ: Ադրբեջանի հայտարարության մեջ ուղղակիորեն անդրադարձ է կատարվում այն իրավունքներին, որոնք Դատարանը համարել է արժանահավատ այն անձանց առնչությամբ, որոնք հարկադրված են եղել լքել իրենց բնակավայրերը, ինչպես նաեւ այն անձանց առնչությամբ, որոնք կարող են պահանջել ապահով վերադարձի երաշխիքներ:

12. Հետեաբար Ադրբեջանի կողմից տրված հավաստիացումների արդյունքում վերացել է Դատարանի կողմից ժամանակավոր միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը: Սակայն այս իրավիճակն ընդունելու եւ այն փաստը ճանաչելու փոխարեն, որ հանգամանքներով պայմանավորված՝ չկա Կանոնադրության 41-րդ հոդվածով սահմանված Դատարանի լիազորությունն իրականացնելու անհրաժեշտություն, ինչպես *Բելգիան ընդդեմ Սենեգալի* կամ *«Մեծ Բելթ» կամրջով անցման (Ֆինլանդիան ընդդեմ Դանիայի)* գործերի դեպքում, սույն գործով մեծամասնությունը որոշել է Կարգադրության եզրափակիչ մասում մասամբ փոփոխված ձեով վերարտադրել Ադրբեջանի հայտարարության երկու տարրերը: Այդպես վարվելու որեւէ անհրաժեշտություն բացարձակապես չի եղել, քանի որ եզրափակիչ մասում երաշխիքների որոշ տարրերի՝ փոփոխված ձեով վերարտադրումը որեւէ ազդեցություն չի թողնում Դատարանի կողմից արժանահավատ ճանաչված նյութական իրավունքների կամ Դատարանում Ադրբեջանի կողմից հնչեցված հայտարարությունների վրա, որոնցում ուղղակիորեն անդրադարձ է կատարվում այդ իրավունքներին, եւ որոնք երաշխավորում են, որ որեւէ արարք, որը կարող է անդառնալի վնաս հասցնել, չի կատարվի մինչև Դատարանի կողմից վերջնական որոշում կայացվելը:

13. Ի վերջո, ես գտնում եմ ոչ միայն հակասական, այլև տարօրինակ այն հանգամանքը, որ Դատարանը մի կողմից հիշեցնում է *Թիմոր-Լեշտին ընդդեմ Ավստրալիայի* գործով իր որոշումը, համաձայն որի՝ իր վարքագծի առնչությամբ հանձնառություն ստանձնող պետությունը ենթադրաբար կդրսետրի բարեխղճություն, իսկ մյուս կողմից Կարգադրության եզրափակիչ մասում պահանջում է, որ Ադրբեջանն ութ շաբաթվա ընթացքում Դատարան ներկայացնի հաշվետվություն՝ իր հրապարակային հայտարարությունն իրագործելու ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին: Դատարանում պետության կողմից հնչեցված կոնկրետ եւ հստակ հայտարարությունների առնչությամբ հաշվետվություն ներկայացնելու այս պահանջն ավելի շուտ հիշեցնում է կանխավարկած, որ հավաստիացումները չեն տրվել բարեխղճորեն, մասնավորապես, երբ դա ընթերցվում է Կարգադրության այն ձեակերպման հետ, որ «Ադրբեջանի լիազոր ներկայացուցչի կողմից իր Կառավարության անունից հնչեցված հայտարարությունները պարտադիր են Ադրբեջանի կողմից կատարման համար եւ նրա համար առաջացնում են իրավական պարտավորություններ» (Կարգադրության 62-րդ պարբերություն): Դրանից պետք էր խուսափել: Ավելին, հաշվետվություն ներկայացնելու այս պահանջն ավելորդ էր՝ հաշվի առնելով Ադրբեջանի կողմից հնչեցված այն հայտարարությունը, որ այն կապահովի Միավորված ազգերի կազմակերպության կողմից ստուգումների իրականացումը եւ տվյալ տարածքում ԿԽՄԿ-ի հետ համագործակցությունը:

14. Վերետում նշված պատճառներով ես դեմ եմ քվեարկել Կարգադրության եզրափակիչ մասի բոլոր երեք ենթապարբերություններին: Նույն պատճառներով ես կարծում եմ, որ Դատարանը չպետք է իրականացնի ժամանակավոր միջոցներ կիրառելու իր լիազորությունը՝ հաշվի առնելով այն փաստը, որ Դատարանում Ադրբեջանը պաշտոնապես եւ հանդիսավոր ձեով հայտարարել է, որ այն ոչ միայն կերաշխավորի այն անձանց իրավունքների մասով իր պարտավորությունների կատարումը, որոնք հավանաբար հարկադրված են եղել լքել Լեռնային Ղարաբաղում/Ղարաբաղում գտնվող իրենց բնակավայրերը, այլև

կպաշտպանի եւ չի վնասի կամ ոչնչացնի մշակութային հուշարձանները, արտեֆակտներն ու օբյեկտները, որոնք կարեւոր նշանակություն ունեն տարածքում գտնվող էթնիկ ծագմամբ հայ բնակչության համար, ինչպես նաեւ նրանց ինքնությանը վերաբերող կամ նրանց գույքի գրանցման փաստաթղթերը: Ադրբեջանի պաշտոնական հայտարարությունների արդյունքում, իմ կարծիքով, միջանկյալ միջոցներ կիրառելու մասին Հայաստանի հինգերորդ դիմումը դարձել է առարկայազուրկ:

(ստորագրված է)

Աբդուլբակի Ահմեդ Յուսուֆ
